

ԴԱՆՑԱՄԵՆ

ԴՈՂ



Հեղինակ ԶՈՒԼԻԱ ՔՈՒՔ  
Նկարագարող ԱՆԻՏԱ ԴՅՈՒՑԱԼԱ

Թարգմանվել է Հանրային լրագրության ակումբի «Ավելի անվտանգ առցանց միջավայր. նախադպրոցական հաստատություններում մեդիագրագիտության ուղղությամբ միջամտություն» ծրագրի շրջանակում ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորմամբ:

Հեքիաթում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Հեղինակային իրավունքները պատկանում են Հանրային լրագրության ակումբին:

### **Քուք Ջուլիա**

Թվային պոչ./Ջուլիա Քուք:– Թարգմ. Քրիստինե Օհանյանը, նկարագարող՝ Անիտա Դյուֆալա:

«Մինչև վերջերս ռվ կմտածեր, որ երեխաներին անհրաժեշտ կլինի նկարագարողումներով գիրք, որը կօգնի նրանց ճիշտ ընտրություն կատարելու սոցիալական ցանցերում: Այս հնարամիտ, գեղեցիկ ուղեցույցը հիշեցնում է երեխաներին, որ առցանց տիրույթում պետք է լինել խելամիտ և WiFi-ի գաղտնաբառն իմանալուց առաջ անպայման պետք է կարդալ այս գիրքը: Հուսով եմ, որ տան մեծահասակները նույնպես կկարդան այն»:

*Դեյվիդ Լ. Հիլ, Բ.գ.դ., ՄԱԱ անդամ,  
մանկաբույժ, գրող և մեդիա փորձագետ*

ISBN 978-9939-76-728-4

Technology Tail © 2017 Julia Cook and Anita Dufalla. Original English language edition published by Boys Town Press 13603 Flanagan Blvd, Boys Town, NE, 68010, United States. Arranged via Licensors Agent: DropCap Rights Agency. All rights reserved.

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը  
Անգլերենից թարգմանեց Քրիստինե Օհանյանը  
Խմբագիր, սրբագրիչ՝ Ազնիվ Նասլան  
Էջադրումը՝ Արմինե Պապանյանի  
Կազմը՝ Մեղրի Շամմասեանի





– Հէյ, տեսնում եմ քեզ:  
**ես եմ՝ քո ընկեր ԷԿՐԱՆԷ:**  
Խնդրում եմ, մի տեղադրիր այդ բառերը:  
ես չեմ սիրում վատը լինել:


– Մի թուպե... Ո՞վ կա այստեղ:  
**– ես եմ՝ քո ԷԿՐԱՆԷ:**  
– Էկրանները չեն խոսում:



– Խոսում են:  
Ես միշտ էլ խոսում եմ:  
Ես ասելու շատ բան  
ունեմ: Եթե ուղարկես կամ  
տեղադրես այդ բառերը,  
ամբողջ օրդ կփչացնես...

ԵՎ ՎԱԴՎԱ ՕՐԳՆ  
ՆՈՒՅՆՊԵՍ:

– Հմմ...  
հնչո՞ւ:






– Որովհետև կվնասես քո պոչը:

– Իմ ի՞նչը:

– Բո  
ԹՎԱՅԻՆ  
ՊՈՉԸ:

– Ես պոչ  
չունեմ:






– Ունես: Բոլորն ունեն: Այն քեզ հետ է օր ու գիշեր:  
Ինչ փոխանցում ես մյուսներին իմ միջոցով,  
հավերժ քեզ հետ է մնում: Ինչ տեղադրում ես  
ցանցում, կաշում է պոչիդ և դառնում քո մի մասը:  
Ինչ ուղարկում ես, մնում է այնտեղ, և այլևս ոչինչ  
չես կարող փոխել...

ԵՍ ԻՍԿԱՊԵՍ  
ԿԱՐԾՈՒՄԷԻ, ԹԵ ԳԻՏԵՍ:



— ՉԷ, չգիտեի...

– Նայիր պոչիդ: Տես այս ամենը... Սրանք այն նվերներն են, որ ինքդ քեզ ես նվիրել: Պոչիդ նվեր ես ավելացնում, երբ ինչ-որ լավ բան ես գրում կամ քո բառերով օգնում ես ու կարեկցում մարդկանց:





Բայց երբ վիրավորական կամ չար բան ես  
գրում, պոչդ վնասվում է, քերծվում և  
պատռվում: Այդ ժամանակ  
ուրիշները ցավ են զգում քո  
կամ քո գրածների պատճառով:



Եվ քանի որ ես այդ ամենի կենտրոնում եմ,  
ես դառնում եմ

**ԱՆՊԱՏԱՄԱՆԱՏՈՒ,  
ՎԱՏ ԷԿՐԱՆ...**

և դա ինձ շատ է  
անհանգստացնում:





Իմ աշխատանքում ցավալին այն է,  
որ ժամանակի ընթացքում մարդկանց մեջ զարգանում է

## «ԱՏԵՂՆԱՇԱՐԱՅԻՆ ԽԻՉԱԽՈՒԹՅՈՒՆ»:

- Դա հնչ է:

Ցատ գեղեցիկ դեմք  
ունես դիմահարդարման  
համար

Իսկապե՞ս:

Ի՞նչ տգեղն ես:

- Դա նշանակում է, որ նրանք այնպիսի  
բաներ են գրում առցանց, որ երբեք չէին  
ասի կամ անի առերես շփման ժամանակ:  
Եվ այդ գրածներից շատ բաներ  
իսկապես վատն են և անտեղի:

ԶԱՐՄԱՑՐՈՒ ԻՆՁ...  
մի խելոք բան ասա

Լսի՛ր, չորս կո՛ղմդ նայիր,  
երևի ուղեղդ մի տեղ կորցրել ես...  
... գուցե գտնես:





Դու գիտեիր, որ ամեն անգամ վատ բան  
կարդալուց հետո հասցեատերը պետք է  
կարդա 10 լավ բան՝ ուշքի գալու համար:  
Դա նշանակում է **10 անկեղծ, հաճելի**  
խոսք ընդամենը **մեկ վատ բանի** դիմաց:  
Իսկ դա շատ է:





# ԵՍ ՔՈ ԷԿՐԱՆՆ ԵՄ...

Ամեն ինչ տեսնում եմ: Քո ուղարկած ամեն բան  
իմ ներսով է անցնում: Նայիր, այս նկարն  
անցյալ շաբաթ էիր տեղադրել, երբ ընկերներիդ հետ  
ծառն էիր բարձրացել:


- Հզոր եր:






– Այո, լավ էր: Հիանալի նվեր է: Սա էլ թափառող կատվի նկար է. ամեն ինչ արեցիր, որ փխիկի համար տուն գտնես:

ԻՍԿԱՊԵՆ ՀԻԱՔԱՆՉ ՕՐ ԷՐ:








Ահա այն սելֆիները, որտեղ ընկերներիդ  
 հետ ես. խանութներ էիք գնացել:  
 Հավատս չի գալիս՝ ինչքան  
 երջանիկ ես երևում:  
 Իսկ ընկերներիցդ մեկն  
**ԱՅՆՔԱՆ ԲԱՐՁՐԱՀԱՍԱԿ Է:**

**- Հայ, լավ եր:**

Մի րոպե: Իսկ ինչո՞ւ այդ  
 մեկի դիմաց նվեր չեմ ստացել:





– Դե, դու միտումնավոր կտրել էիր նկարը, որ ընկերուիդ չերևար: Իմ ընկեր էկրանը տեսավ նրան, երբ այդ նկարը հայտնվեց առջանց. ընկերուիդ դեմքը միանգամից մռայլվեց:

– Այո՛, հետո նա իր մայրիկին բողոքեց, նրա մայրիկը զանգեց իմ մայրիկին, և ես ԵՐԿՈՒ ՕՐՈՎ պատժվեցի:

– Եթե իմ դուստրը լինեիր, քեզ կպատժեի

## ԵՐԿՈՒ ՏԱՐՈՎ:

– Դե, ուրեմն լավ է, որ էկրանները երեխաներ չունեն:





Մի րոպե, բայց ես ոչ մի վատ բան չեի գրել, ինչո՞ւ է պոչս վնասվել:

– Որովհետև այն մարդը, որին ուղարկել ես գրածդ, շատ վատ է զգացել:

– Դե, ուրեմն ինձ սխալ է հասկացել: Ոմանք այնքա՛ն զգայուն են:



## ԱՅՈ՛, ԱՅԳՊԵՍ ՀԱՃԱԹ Է ԼԻՆՈՒՄ:

Դժբախտաբար, ես կարող եմ միայն բառեր և նշաններ տեղադրել, այլ ոչ թե մարդկանց խոսքեր և թաքնված իմաստներ, որոնք խոսքի մշտական ուղեկիցն են: Առցանց խոսելը հեշտ է, բայց երբեք **այնքան տպավորիչ չէ**, որքան դեմ առ դեմ շփվելը: Հույս ունեմ, որ դուք՝ մարդիկ, կսկսեք հասկանալ դա:

– Իսկ սա ի՞նչ է:

– Ծակ:

– Այդ ինչպե՞ս:

– Ծակերն առաջանում են ոչ այնքան խելացի գրառումներից: Օրինակ, երբ սոցցանցերում հրապարակեցիր «Լեզվի մշակույթ» առարկայի քննության պատասխանները:

– Դա է՞լ գիտես:


– ԲԱ ՈՆՑ:





Էսինչ փողոց,  
11 շենք, բն. 22

Այս ծական էլ հասցեդ տեղադրելու պատճառով է:  
Այդքան էլ խելացի քայլ չէր:



Հանգիստս վայելում  
եմ արջերի հետ:  
Կհանդիպենք 2 օրից:

Իսկ ահա այս մեկը՝ այն պատճառով, որ ամբողջ  
աշխարհին հայտարարեցիր, որ

**10 ՕՐՈՎ ՓՆՈՒՄ ԵՍ**

Ազգային պարկ:

– Իսկ այս մե՞կը:



– Օ՛հ, սա եղավ այն ժամանակ,  
երբ գաղտնաբառդ տվեցիր  
ընկերներիդ: Ինչո՞ւ ես նման բան  
արել: Գաղտնաբառը անձնական

տեղեկություն է, որը միայն **ԵՍ Ե ԳՈՒ**

պետք է իմանանք,  
ոչ թե դու և ամբողջ աշխարհը:  
Եթե մեկ ուրիշն էլ իմանա, ինչպե՞ս  
կարող եմ քեզ պաշտպանել:

– Թե չէ ինչպե՞ս կարող էիր  
իմանալ այս ամենի մասին:



գորիլայի  
սիրուն դեմք

գաղտնաբառս՝  
superst\*r863

Երկու գույնի գուլպա եմ  
հագնում... դե, մի անգամ  
ենք ապրում...

– ԱՅՈՐ... Այդ դեպքում ինձնից բացի  
ուրիշներն էլ են շատ բան իմանում, եթե  
գիտեն, թե որտեղ փնտրել:  
Նրանք կարող են գտնել այն ամենը, ինչ  
երբևէ ուղարկել ես, ասես դրանք գրքում  
գրված լինեն:


Գաղտնաբառը  
պետք է  
ՀՈՒՅԺ ՓԱՂՏՆԻ  
ՄԱՂԵԼ



Պետք է լուրջ մտածես առցանց  
հարթակում մի բան անելուց և  
տարածելուց առաջ: Որովհետև թվային  
պոչոյ միշտ քեզ հետ է լինելու:

## ԱՊԵՆ ՕՐ ՀԵՏԴ ԵՍ ՏԱՆԵԼՈՒ,

և, հավատան ինձ, վնասված պոչոյ  
քեզ շատ է խանգարելու:







– Այդ ինչպե՞ս:

– Վնասված, կապտած, պատռված

## ԹՎԱՅԻՆ ՊՈԶԵ

ցույց կտա բոլորին, որ դու բարի չես:  
Մարդիկ քեզ հետ ժամանակ չեն անցկացնի,  
որովհետև կվախենան քեզ հետ շփվելուց:





Երբ փորձես դպրոց ընդունվել, բոլորից  
**մերժու՛մ** կստանաս, որովհետև  
 պոչիդ կապտուկները, քերծվածքներն ու  
 պատռվածքները ցույց կտան,  
 որ ուրիշները քո պատճառով լաց են եղել:



Մենք  
աշխատանքի  
ենք ընդունում  
միայն ՇՆՈՐՀԱԼԻ  
ԹՎԱՅԻՆ ՊՈԶԵՐԻՆ

Երբ գործատուները տեսնեն ծակերն  
ու վերքերը, նրանք չեն ցանկանա  
քեզ աշխատանքի ընդունել: Նրանք  
կենթադրեն, որ առցանց հարթակում  
անպատասխանատու ես և ասում ես  
այնպիսի բաներ, որոնք վատ կամ սխալ են:





Ես ♥

Բայց նայիր, հիմա պոչի շատ լավ տեսք ունի.  
այնքան լավ բաներ ես տեղադրել առջանց:  
Եթե այսպես շարունակես, կգարմանաս,  
թե ինչքան շատ նվերներ կստանաս:



ՀԱՃԵԼԻ





– Օրինա՞կ:

– Օրինակ՝ մի լավ բան՝ հիմա,  
ավելի լավ բան՝ հետո...

**ԵՎ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԵՐՁԱՆԻԿ ԷԿՐԱՆ...**

Այն, ինչ այսօր ես տեղադրում, կկարևորվի  
վաղը. հարցը միայն այս պահի չէ:  
Քեզնից այն կողմ էլ բաներ պետք է  
տեսնես, և հիմա քեզ ցույց կտամ  
ինչպես:

Դիր **«Մտածող ձեռնոցներ»** նախքան  
ստեղծագործել աշխատելը: Դրանք  
քեզ կօգնեն տարբերելու լավը վատից:  
Նայիր, դրանք այսպիսի տեսք ունեն:





– Իսկ ինչպե՞ս են աշխատում:

– Ինքդ քեզ հետևյալ հինգ հարցերը տուր...

# ՄՏԱԾԻՐ

ՏԵՂԱԴՐԵԼՈՒՑ  
ԱՌԿՋ

Արդյոք դա ճիշտ է:

Արդյոք դա կարո՞ղ է օգնել:

Արդյոք ոգեշնչո՞ղ է:

Արդյոք անհրաժեշտ է:

Արդյոք բարի նպատակ ունի:

Եվ եթե անկեղծ  
պատասխանը լինի

«ԱՅՈՒՐ», ՈՒՐԵՄՆ

տեղադրիր,  
փոխանցիր,  
գրիր,

ուղարկիր և

տարածիր:

Արդեն երկար մտածելու  
կարիք չի լինի:


ՄՏԱԾԻՐ  
տեղադրելուց առաջ

ՄՏԱԾԻՐ  
տեղադրելուց առաջ

Բայց եթե հարցերի պատասխանը լինի «Ո՛չ», ուրեմն թող, որ **«Մտածող ձեռնոցները»** կանգնեցնեն քեզ: Սեղմիր **«ՋՈՂԵՂ»** կոճակը, այդպես ճիշտ կլինի:





A colorful illustration showing the lower legs and feet of several children standing in a circle. They are holding a large, light blue globe in the center. The globe is covered with numerous small, green gift boxes tied with yellow ribbons. The children's legs are wearing various colored pants (red, grey, brown, blue, green, purple, orange) and shoes (brown, blue, black, pink, purple, green).


# ՄԵՇՏ ՀԻՇԻՐ, ՈՐ ԳՈՒ ԵՍ ՊԱՏԱԽԱՆԵԱՏՈՒ

այն ամենի համար,  
ինչ կատարվում է պոչիդ հետ:  
Եթե ճիշտ բառեր ընտրես,  
**ԵՐԲԵՔ** վատ իրավիճակում  
չես հայտնվի:



Այդ ժամանակ ես այլևս չեմ վախենա, որ կլինես

ԱՆՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒ,  
ՎԱՏԷԿՐԱՆ...



Ինչը ն իմ, ն քո կյանքը

ՇԱՏԱՎԵՐԻ ԼԱՎԵ

Կդարձնի:



## ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՊՈԶԻ ՀԵՏ

**ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՀՐԱՇԱԼԻ ԵՆ...** բայց երբեմն երեխաներին պետք է օգնել աշխատելու դրանց հետ և իմաստուն օգտագործելու, որպեսզի դրանք հարստացնեն, ոչ թե վնասեն: Ահա մի քանի խորհուրդներ, որոնք ձեզ կօգնեն ուղղորդելու երեխաներին՝ թվային առողջ հետագիծ ստեղծելու:

**1** Ձեր երեխաների հետ միասին ճանապարհորդեք առցանց հարթակում և նրանց օգնեք կողմնորոշվելու սոցցանցերում և այլ կայքերում: Օգտագործեք այս ժամանակը՝ խոսելու ձեր ակնկալիքների, ինչպես նաև տեխնոլոգիաների հանդեպ հարգանքի մասին:

**2** Վերահսկեք առցանց հարթակի հասանելիությունը՝ տեղադրելով ընտանեկան համակարգիչը երևացող տեղում և սահմանափակելով տան սմարթֆոնների, պլանշետների և լեփթոփների օգտագործումը: Որոշեք ժամկետները, բովանդակության հետ կապված սահմանափակումները, ինչպես նաև այն, թե երբ և որտեղ երեխաները կարող են օգտագործել իրենց թվային սարքերը:

**3** Առօրյայում (օրինակ՝ ճաշելուց և քնելուց առաջ) անջատեք և վերալիցքավորեք թվային ԲՈԼՈՐ սարքերը: Եթե երեխան օգտագործում է իր սմարթֆոնը որպես զարթուցիչ, փոխարինեք այն ոչ թանկ ժամացույց-զարթուցիչով:

**4** Ասեք և անընդհատ հիշեցրեք երեխաներին, որ սոցցանցերում երբեք չտեղադրեն անձնական տեղեկություններ (տան հասցեն, գաղտնաբառեր, հաշվեհամարներ, հեռախոսահամարներ և այլն):

**5** Բացատրեք, հիշեցրեք և ամրապնդեք անվտանգության այս կանոնը: Երբեք դեմ առ դեմ մի հանդիպեք մեկի հետ, որին միայն համացանցից եք ճանաչում, և եթե ինչ-որ մեկն ուզում է հանդիպել ձեզ հետ, պատմեք դրա մասին ձեր ծնողին, ավագ եղբորը կամ քրոջը, ուսուցչին կամ վստահելի մեծահասակին:



Մենք՝ Հանրային լրագրության ակումբի թիմում համախմբված լրագրողներս,  
մեդիաաշխարհի մարդիկ ենք: Մեզնից ոմանք նաև ծնողներ են:

Ինչպես շատ ու շատ ծնողների, այնպես էլ մեր մտահոգություններից է ինչպես զերծ պահել  
մեր ու մեր երկրի երեխաներին համացանցի վտանգներից: Հենց այս մտահոգություններն  
էլ դրդեցին մեզ մտահղանալու «Ավելի անվտանգ առցանց միջավայր. նախադպրոցական  
հաստատություններում մեդիագրագիտության ուղղությամբ միջամտություն» ծրագիրը,  
որի նպատակն է նպաստել Հայաստանում մեդիագրագիտության և տեղեկատվական  
գրագիտության մակարդակի բարձրացմանը նախադպրոցական կրթական ոլորտում:

Ծրագրում ներառեցինք քայլեր, որոնք և՛ մեծերի, և՛ փոքրերի համար են: Մենք գիտենք,  
որ հեշտ չէ երեխաների հետ խոսել բարդ թեմաների շուրջ: Այդ պատճառով որոշեցինք օգնել  
ծնողներին ու մանկավարժներին և նախաձեռնեցինք այս գրքի թարգմանությունն  
ու հրատարակումը: Այս հարցում մեզ օգնեց Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը:

Հուսով ենք, որ գրքի հետ ծանոթությունը կօգնի թե՛ մեծերին, թե՛ փոքրերին՝  
ավելի լավ հասկանալու համացանցն ու մեդիան, դրանց բերած հնարավորություններն ու  
բարօրության հասնելու նպատակով դրանք կիրառելու միջոցները,  
ինչպես նաև խուսափելու համացանցում առկա հնարավոր թակարդներից:

Մեծերի լեզվով ասած՝ այն կօգնի դառնալու մեդիագրագետ:

Գրքի հրատարակչական աշխատանքներին իրենց ներդրումն են ունեցել ծրագրի ղեկավար,  
Հանրային լրագրության ակումբի (ՀԼԱ) նախագահ Սեդա Մուրադյանը, ծրագրի համակարգող,  
ՀԼԱ աշխատակից Աննա Մեխակյանը, բանասեր Գոհար Մսրյանը և գրող Դավիթ Մուրադյանը:

